ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դեղձուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դեղձուտ, (094)839565, dexcuthamaynq@mail.ru,deghdzut.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 27

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 09.12.2019ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 11 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,,Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով ավագանին

որոշում է՝

հաստատել Դեղձուտ համայնքի ավագանու 09.12.2019թվականի թիվ 11 հերթական նիստի օրակարգը.

1.,,Դեղձուտ համայնքի 2019թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին,,- հարցը: /զեկ. Գ. Զոհրաբյան/

2. ,,Դեղձուտ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերը վարձակալությամբ տրամադրելու մասին,,-հարցը: /զեկ. Յ. Մուրադյան/

3. ,,Դեղձուտ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական արտադրական նշանակության հողատեսքը աճուրդային կարգով օտարելու մասին,,-հարցը: /զեկ. Յ. Մուրադյան/

4. ,,Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին,,-հարցը: /զեկ. Կ. Գիշյան/

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՅՈՒՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դեղձուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դեղձուտ, (094)839565, deghdzut.aravot@mail.ru,deghdzut.aravot@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 28-Ն

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՍԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով ավագանին

որոշում է՝

1.: Դեղձուտ համայնքի ֆոնդային բյուջեի եկամտային մասի 04.05.01.58 /Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում/ ծրագրի 5113 /Ճանք-շինությունների կապիտալ նորոգում/ հոդվածին ավելացնել 1746.0հազ.դրամ /մեկ միլիոն յոթ հարյուր քառասունվեց հազար/ հհ դրամ, որն Արարատի մարզի Դեղձուտ համայնքի մշակույթի տան դահլիճի վերանորոգման նպատակով ՀՀ կառավարության կողմից տրամադրված կապիտալ սուբվենցիա է:

2.Անհրաժեշտություն է առաջացել Դեղձուտ համայնքի 2019թվականի վարչական բյուջեում կատարել նաև հետևյալ փոփոխությունները.

11.01.02.51/Վարչական բյուջեի պահուստային միջոցներ/ ծրագրի 4891/Պահուստային միջոցներ/ հոդվածից հանել 350.0հազ.դրամ և ավելացնել՝

ա/01.01.01.51/Կառավարման մարմնի պահպանում/ ծրագրի 4241/Մասնագիտական ծառայություններ/ հոդվածին +150.0հազ.դրամ,

բ/10.07.01.54/Սոցիալապես անապահով անձանց աջակցություն/ ծրագրի 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածին +200.0հազ.դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՀԱՄՈՅԱՆՅԱՆ ԳՈՌԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դեղձուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դեղձուտ, (091)839565, dexouthamaynq@mail.ru,deghdzut.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 29

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության ,, Հողային օրենսգրքի,, 78-րդ հոդվածի պահանջներով ավագանին

որոշում է՝

1.Թույլատրել համայնքի ղեկավարին գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով , կազմակերպել Դեղձուտ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող, մերձարաքսյան գոտում՝ Ազատ գետի ափին գտնվող 4.1868հա գյուղատնտեսական նշանակության՝ այլ հողատեսքի վարձակալությամբ տրամադրումը մրցույթի միջոցով:

2.Վարձակալվող հողատեսքը ներկայացնել 9 լոտով՝

1. 1-ին լոտ- ծածկագիր՝ 03-037-0101-0015, հողատեսքի չափը՝0.35հա,
2. 2-րդ լոտ-ծածկագիր՝ 03-037-0101-0014, հողատեսքի չափը՝ 0.1985հա,
3. 3-րդ լոտ-ծածկագիր՝03-037-0101-0013, հողատեսքի չափը՝ 0.478հա,
4. 4-րդ լոտ-ծածկագիր՝ 03-037-0109-0005, հողատեսքի չափը՝ 0.1305հա,
5. 5-րդ լոտ-ծածկագիր՝ 03-037-0109-0007, հողատեսքի չափը՝ 0.1023հա,
6. 6-րդ լոտ-ծածկագիր՝ 03-037-0109-0006, հողատեսքի չափը՝0.275հա,
7. 7-րդ լոտ- ծածկագիր՝ 03-037-0201-0003, հողատեսքի չափը՝ 0.7565հա,
8. 8-րդ լոտ-ծածկագիր՝ 03-037-0201-0002, հողատեսքի չափը՝ 0.4905հա,
9. 9-րդ լոտ-ծածկագիր՝ 03-037-0111-0011, հողատեսքի չափը՝1.4055հա:

3. Հողատեսքերը վարձակալությամբ տրամադրելու համար անցկացվող մրցույթն իրականացնել մինչև 30.01.2020թ-ը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դեղձուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դեղձուտ, (094)839565, dexcuthamaynq@mail.ru,deghdzut.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 30

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՄՈՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ և ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՕՏԱՐՎՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության ,,Հողային օրենսգրքի,, 67-րդ; 68-րդ հոդվածների պահանջներով համայնքի ավագանին

որոշում է՝

1. Թույլատրել Դեղձուտ համայնքի ղեկավարին արտադրական գործունեություն ծավալելու նպատակով կազմակերպել Դեղձուտ համայնքի սեփականություն հանդիսացող, մերձարաքսյան գոտում գտնվող, արտադրական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 03-037-0102-0012 ծածկագրով, 0.1563հա գյուղտնտեսական արտադրական օբյեկտների հողատեսքի օտարումը աճուրդային կարգով:
2. Օտարվող հողատեսքը ներկայացնել 1 լոտով:
3. Օտարվող հողատեսքի մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 100 %-ի չափով:
4. Հողատեսքի օտարումը կազմակերպել մինչև 30.01.2020թվականը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դեղձուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դեղձուտ, (094)839565,
dexcuthamaynq@mail.ru,deghdzut.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 31-Ն

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական տուրքերի և վճարների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 14-րդ հոդվածներով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետերի պահանջներով ավագանին

որոշում է՝

Դեղձուտ համայնքի վարչական տարածքում 2020թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի: /կցվում է/

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված Դեղձուտ համայնքի ավագանու
„09„12„2019թվականի N„31-Ն„
որոշման,համայնքի ղեկավար՝
Յուրիկ Մուրադյան

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Տեղական տուրքերի դրույքաչափերը

1. Դեղձուտ համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝7500 դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝1500դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝2500 դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝1500դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական

նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի)թույլտվության համար՝2500 դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60000 դրամ.

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 18000 դրամ.

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 15000 դրամ.

9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝2100դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝3600դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4500 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6300 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝9000 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝15000 դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ՝ 2100դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝3600դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝4500 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝6300 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝9000 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝15000 դրամ.

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝105 դրամ մեկ քառակուսի մետրի համար.

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի և զվարճանքի կազմակերպման օբյեկտներին, ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝3000 դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝7500 դրամ,

12) համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվումէ՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝1800դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3600դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4800դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6600 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝10500դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 300 դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 450դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 750 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝1500դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ.

14) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 600 դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1050 դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝450 դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 113դրամ,զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 45 դրամ

16) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝3000 դրամ.

Տեղական վճարների դրույքաչափերը

2. Դեղձուտ համայնքում 2019թվականի համար սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000դրամ,

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000դրամ,

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000դրամ,

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000դրամ

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000դրամ,

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝500դրամ,

7) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ փոխհատուցման վճար՝ 200 դրամ:

8)աղբահանության աշխատանքներըկազմակերպելու համար աղբահանության վճարը յուրաքանչյուր ամիս 1քմ համար սահմանվում է՝ ա)առևտրի և հանրային սննդի, բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների համար՝ 20դրամ, բ) արտադրական, արդյունաբերական ևգրասենյակային նշանակության շինությունների համար՝ 20դրամ,

գ)կրթական, մշակույթային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինությունների համար ՝ 2դրամ դ)համայնքի անդամների համար

աղբահանության վճար սահմանել՝ամսեկան 100դրամ 1 շնչի համար,
9) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է
ա)ըստ ծավալի մեկ մետր խորանարդ աղբի համար ՝ 200դրամ,
բ)ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 1000դրամ
10) Անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի ծառայություններից օգտվելու համար սահմանել հետևյալ վճարները.
ա)կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն - 500դրամ, բ)ծննդօգնություն՝ բա)թեթև միջամտություն – 1000դրամ, բբ)ծանր միջամտություն – 5000դրամ,
գ)արյունառում կամ այլ նմուշառում՝մանր կենդանին-100դրամ,խոշոր կենդանի-200դրամ,բացառությամբ 'Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում' պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների.
դ)կենդանիների արտաքին և ներքինմակաբույծների դեմ պայքար-200դրամ, ե)ախտահանություն-1քմ 100դրամ, զ)միջատազերծում /դեզինսեկցիա/ -1քմ 100դրամ,
է)կրծողների ոչնչացում /դեռատիզացիա/ -1քմ 200դրամ,
ը)արհեստական սերմնավորում -5000դրամ, թ)կենդանու հերձում՝ մանր կենդանի -1000դրամ, խոշոր կենդանի -2000դրամ,
ժ)կենդանու բուժում՝կախված հիվանդությունների տեսակից և կենդանու տեսակից, յուրաքանչյուր այցելությունը՝մանր կենդանի-1000դրամ, խոշորկենդանի-2000դրամ, ի)կենդանիների նախասպանդային զննում՝մանրկենդանի-1000դրամ, խոշոր՝2000դրամ:

Աշխատակազմի քարտուղար /Կ. Գիշյան/